Աիդա Ավետիսյան

Երգեր և ռոմանսներ

ԱԻԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՐԳԵՐ ԵՎ ՌՈՄԱՆՍՆԵՐ

Չայնի և դաշնամուրի համար

Վանաձոր

«Որդան Կարմիր» տպագրատուն

2025թ.

ՀՏԴ 78
ԳՄԴ 85.31
Ա 791

Կազմող՝ Արման Ավետիսյան

Գրքի տպագրությանն աջակցել է «Նոր Դար»
կրթամշակութային և մարզական հասարակական
կազմակերպությունը

Ավետիսյան Աիդա
Ա 791 Երգեր և ռոմանսներ: Զայնի և դաշնամուրի համար /
Ա. Ավետիսյան.- Վանաձոր: Հեղ. հրատ., 2025.- 24 էջ:

Գրքում ընդգրկված են ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Աիդա Ավետիսյանի տարբեր ժամանակաշրջանի երգերն ու ռոմանսները: Ստեղծագործությունները հրատարակվում են առաջին անգամ:

ՀՏԴ 78
ԳՄԴ 85.31

ISMN 979-0-69380-416-0
© Ավետիսյան Արման, 2025

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայկական մշակութային կյանքում իր արժանի տեղն է զբաղեցրել բազմավաստակ կոմպոզիտոր, տաղանդավոր դաշնակահար, հմուտ և բեղուն մանկավարժ, երաժշտահասարակական գործիչ Աիդա Կոնստանտինի Ավետիսյանը: Նրա մտածողությունը, աշխարհըմբռնումը խիստ ազգային են, երաժշտական լեզուն պատկերավոր է, ընդգրկուն և հակիրճ, բայց բովանդակալից և իմաստային, գրելաոճը՝ անհատականացված և տպավորիչ: Այս ինքնատիպությամբ նա կերտել է բարդ ու միմյանցից տարբերվող հոգեբանական իրավիճակներ՝ բացահայտելով մարդու ներքին էությունը, ապրումները, նրա աշխարհընկալմանը բնորոշ պարզությունն ու անմիջականությունը:

Ուրույն մտածելակերպի ձևավորմանը մեծապես նպաստել են անձնական շփումներն ու մտերմությունը XX դարի երաժշտարվեստի ականավոր գործիչների՝ Դ. Կաբալևսկու, Տ. Խրենենիկովի, Էդ. Միրզոյանի, Ա. Բաբաջանյանի, Ղ. Սարյանի, Ալ. Հարությունյանի, Կ. Սարաջևի և այլոց հետ:

Աիդա Ավետիսյանը ծնվել և մեծացել է Երևանում, ստացել է մասնագիտական կրթություն, ավարտել է Կոմիտասի անվան կոնսերվատորիան որպես կոմպոզիտոր (դասատու Էդ. Միրզոյան) և դաշնակահար (դասատու Յու. Հայրապետյան): Նա ուներ փայլուն հեռանկարանային հնարավորություններ մնալու և ստեղծագործելու մայրաքաղաքում, սակայն 1956 թվականից՝ ընդունելով տաղանդաշատ երաժիշտ, հմուտ մանկավարժ և կոմպոզիտոր Էդ. Կզարթմյանի հրավերը, բնակություն հաստատեց Կիրովականում (այժմ Վանաձոր) ամուսնու՝ տաղանդավոր երգիչ Շ. Դավիդյանի, և դստեր հետ: Շնորհալի երաժիշտների ընտանիքը կարևոր դերակատարություն ունեցավ մեր հանրապետության երրորդ քաղաքի մշակույթային, կրթական կյանքում:

Բազմամյա ստեղծագործական ուղու արդյունքն է տարբեր ժանրերի ստեղծագործությունների պատկառելի ցանկը: Նրա ստեղծագործական ժառանգությունը կարելի է բաժանել երկու մեծ ոլորտի՝ նվագարանային և վոկալ: Մեծագույն նվաճումները կապված են թե՛ կամերային և թե՛ խմբերգային երգարվեստի հետ: Նա հեղինակել է բազում ռոմանսներ, երգեր և խմբերգեր՝ տարբեր բանաստեղծների տեքստերով, վոկալիզներ, մանկական երգեր, ժողովրդական երգերի մշակումներ, կոնցերտ-պոեմ ձայնի և նվագախմբի համար:

Նվագարանային երաժշտությունն ընդգրկում է կոնցերտներ՝ դաշնամուրի, ջութակի, թավջութակի (անավարտ), տարաբնույթ դաշնամուրային երկեր՝ սոնատ, սկերցո, սյուիտ, տասնյակ մանրանվագներ՝ պրելյուդներ, կոնցերտային էտյուդ և այլն: Նկատելի են նրա հաջողությունները գործիքային կամերային երաժշտության բնագավառում. սյուիտ՝ լարային կվարտետի համար, կվինտետ, պիեսներ՝ շեփորի, սաքսոֆոնի և էստրադային նվագախմբի համար, ջութակի սոնատ, էքսպրոմտ

կամերային նվագախմբի համար, դանդաղ ֆոկստրոտ՝ լարային կվինտետի համար, նոկտյուրն, ռոմանս, մտորումներ՝ թավջութակի համար, պիեսներ՝ քանոնի և դաշնամուրի համար… Եվ սա դեռ նրա ստեղծագործությունների լրիվ ցանկը չէ, այն դեռ շարունակելի է …

Անչափ արգասավոր է Ավետիսյանի մանկավարժական գործունեությունը, որը սկսվել է դեռևս 1956 թվականից և շարունակվել մինչև 2017 թվականը Վանաձորում՝ Մ. Թավրիզյանի անվան երաժշտական ուսումնարանում (2006թ-ից Արվեստի պետական քոլեջ): 50-ամյա աշխատանքային սահմանագիծն անցած Ավետիսյանը դասավանդել է երաժշտատեսական տարբեր առարկաներ, վարել մասնագիտական դաշնամուրի և նվագակցության դասարաններ, տարբեր տարիներին ղեկավարել է ուսումնարանի դաշնամուրային բաժինը: Բեղուն մանկավարժական աշխատանքի վառ վկայությունն են տաղանդաշատ սաները՝ Սվ. Բոյաջյանը, Ստ. Ռոստիաշվիլին, Ա. Աղաջանյանը, Ա. Մինասյանը, Ռ. Բարսեղյանը, Թ. Դավիդյանը և այլոք, որոնք ապրում և ստեղծագործում են թե՛ մեր հանրապետությունում և թե՛ նրա սահմաններից դուրս:

Ավետիսյանի կենսագրականի անբաժանելի մասն է կազմում կոնցերտմայստերությունը: Որպես նվագակցող նա սկսեց հանդես գալ դեռևս ուսանողական տարիներից: Շնորհիվ բացարձակ երաժշտական լսողության և հանպատրաստից տրանսպոզիցիայի բացառիկ կարողության՝ նա հաջողությամբ հանդես էր գալիս թե՛ վոկալիստների, թե՛ ջութակահարների, թե՛ ժողնվագարանների համույթի հետ:

Ա. Ավետիսյանը ծավալել է նաև երաժշտահասարակական լայն գործունեություն, հանդես է եկել բազում հոդվածներով տեղական «Կայծ» թերթում՝ լուսաբանելով Կիրովական քաղաքի երաժշտական կյանքի անցուդարձը, տվել է իր անկողմնակալ գնահատականը տեղի ունեցող երաժշտական ստուգատեսներին և փառատոներին: Ա. Ավետիսյանը Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների Միության, ԽՍՀՄ կոմպոզիտորների Միության անդամ է, «Աշխատանքի խիզախության համար» մեդալակիր, աշխատանքի վետերան:

Ավետիսյանի ստեղծագործական դիմագիծը ձևավորվել է խորհրդային շրջանում, երբ ինտենսիվ զարգանում էր և կազմավորվում ազգային երաժշտության պրոֆեսիոնալ դպրոցը: Բնականաբար նրա ստեղծագործությունները ներառեցին այդ դարաշրջանի արվեստի առավել տիպական կողմերը՝ լավատեսությունն ու կենսասիրությունը, հավատն առ մարդը և նրա լուսավոր ապագան, միաժամանակ նրան հատուկ են կերպարային-իմաստային կապերը տարբեր ժանրերի ստեղծագործությունների միջև: Կոմպոզիտորը մեծ սիրով և գորովանքով է անդրադարձել հայրենի բնության, ազգային ոգու և արվեստի կերպարներին: Ավետիսյանի երաժշտությունն աճել է ազգային հողի վրա, բայց նա գրեթե չի դիմել բուն ժողովրդական թեմաներին, այլ ստեղծագործաբար կիրառել է հայ երաժշտական արվեստի լադաինտոնացիոն և մետրառիթմիկ տարրերը:

Ավետիսյանի երաժշտությունը զուրկ է կենցաղայնությունից. երգայնությունն ու պարայնությունը բացահայտվում են շարժման դինամիկայում, կենսախինդ, զվարթ կերպարներում ու կատակային ելևէջներում:

Նրա երգեցողության դասարանի շնորհալի շրջանավարտ Արման Ավետիսյանը տուրք մատուցելով իր ուսուցչի վառ հիշատակին, կազմել և նախապատրաստել է տպագրության անվանի կոմպոզիտորի մի շարք երգեր՝ «Կարոտ», «Երջանկություն», «Դարձար դու», «Քո աչերը»: Դա իսկական նվեր է թե՛ երգիչ-ուսանողների, թե՛ կատարողների համար: Այս երգերում զարմանալիորեն զուգակցվում են վոկալ մեղեդայնության, երգեցիկ ասերգայնության տարրերը զարգացած և հարուստ դաշնամուրային նվագակցության հետ:

ՆԵԼԼԻ ՊԱՊԱՆՅԱՆ
Երաժշտագետ,
Վանաձորի Մ. Թավրիզյանի անվան արվեստի
պետական քոլեջի փոխտնօրեն,
Հ. Թումանյանի անվան ՎՊՀ
արվեստի և սպորտի ամբիոնի
ավագ դասախոս

ԿԱՐՈՏ

Խոսք՝ Էլ. Դավիդյանի

Երաժշտ.՝ Աիդա Ավետիսյանի



13

քեզ եմ փընտ-ռում ան-հույս, ան-ճար, լույսն ես դու իմ, ա-ռևն ան-մար:
բայց աշ-խար-հում դա-տարկ ու փուչ դու ես մի-այն ա-ռև ու լույս:

17

Թող քեզ հի-շեմ գար-նան օ-րով, թող քեզ տես-նեմ ես ջերմ կան-չով,

21

դու՝ ինձ հա-մար կյան-քի ա-ռև, ինձ ջեր-մաց-նող քա-մի, անձ-ռև:

25

Թող քեզ հի-շեմ գար-նան օ-րով, թող քեզ տես-նեմ ես ջերմ կան-չով,

29

դու՝ ինձ հա-մար կյան-քի ա-րև, ինձ ջեր-մաց-նող անձ-րև:

33

ինձ ջեր-մաց-նող անձ-րև, ինձ ջեր-մաց-նող անձ-

dim.

36

rit

rit.

րև, միշտ ջեր-մաց-նող անձ-րև...

1. Դու՝ իմ կյանքի հեքիա՛թ աշխարհի,
Դու՝ իմ սիրո երա՛զ անսպառ,
Քեզ եմ փնտրում անհույս, անճար,
Լույսն ես դու իմ, արևն անմար։

ԿՐԿՆԵՐԳ Թող քեզ հիշեմ գարնան օրով,
Թող քեզ տեսնեմ ես ջերմ կանչով,
Դու՝ ինձ համար կյանքի արև,
Ինձ ջերմացնող քամի, անձրև։

2. Թող տարիներ անցնեն անհույս,
Թող ինձ բերեն կյանքի նոր հույս,
Բայց աշխարհում դատարկ ու փուչ
Դու ես միայն արև ու լույս։

ԿՐԿՆԵՐԳ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք՝ Պ. Մուրադյանի



10

ողն է գար - նան ինձ ու - ղեկ - ցում քո քայ - լե - ռով:

dim.

13

Թե միշտ քայ - լես դու իմ կող - քով, գա - ռունն ես իմ ձը - մեռ օր -

16

վա, ու ես հար - բած քո գա - ռուն - քով,


19
մահն էլ աչ - քիս կյանք կը - նը - վա։
accel.
21
rit.

Վարարում են հույզերս այնքան,
Երբ քայլում ես դու իմ կողքով,
Ասես թռվիչ բույրն է գարնան
Ինձ ուղեկցում քո քայլերով։

Թե միշտ քայլես դու իմ կողքով,
Գարունն ես իմ ձմեռ օրվա,
ՈՒ ես, հարբած քո գարունքով,
Մահն էլ աչքիս կյանք կթվա։

ԴԱՐՁԱՐ ԴՈՒ

Խոսք՝ Վ. Տերյանի



13

Բայց սիր - տըս ար - դեն խո-նար-հել է, հո - գիս ար-

16

դեն մա-ռել. թե - թև է ար-դեն նե-

ff

rit.

ff

19

ռե - - լը, բայց... ան-հը-նա՛ր է սի - ռել...

rit.

rit.

mp


23
3

Դարձար դու և սիրտըս տխուր է.
Հնչի՛ր - երգից անուշ.
Քո ձայնը այնքան դեռ մաքուր է,
Այնքան հարազատ մի հուշ։

Բայց սիրտըս արդեն խոնարհել է,
Հոգիս արդեն մարել.
Թեթև է արդեն ներելը,
Բայց... անհնա՛ր է սիրել...

ՔՈ ԱՉԵՐԸ

Խոսք՝ Հովի. Ղուկասյանի



* Երկրորդ տան մեղեդային պատկերը

12

p

տե - ր ը դար - ձար: Ա - - ա, ա - ա -
նո - ր ը բաց - վեր:

pp

16

mp

ա, բախտ չը - կար, լույս չը - կար, հույ - սը ս դար - ձար,
ինձ մի - այն վար - դե - ր ի փու - շը մը - նաց,

p

19

f

բա - ժան - ման վար - դե - ր ի փու - շը դար - ձար: Տան - ջե - ցիր, ի՞նչ օ - գուտ,
բա - ժան - ման դար - դե - ր ի հու - շը մը - նաց:

8va

gliss.

mf

8vb

22

rit.

ով ան-գո՛ւթ յար, չէ՞ որ սե-ղը իմ սիտնէ զար - կել քա-ղե-քար,

rit.

25

mp

ժըպ-տա-ցիր դու սի-ղով ա-մեն-քին, յա՛ր, ինձ թո-ղիր ան-մե-կին

p

28

1.

ճամ-փե-քին, յա՛ր:

mf


32
2.
ճամ-փե-քին, յա՛ր։ Ինձ մի-այն վար-դե-րի
35
փու-շը մը-նաց, կա-րո-տած դար-դե-րիս
rit.
37
rit.
հու-շը մը-նաց։
rit.
p
8vb

1. Ա՞խ, աչերդ մով եթեր,
Ծոփ ծամերդ ոսկեթել,
Ա՛յ անգին, իմ անգին սերը դարձար,
Իմ սրտի, իմ բախտի տերը դարձար։
Բախտ չկար, լույս չկար, հույսս դարձար,
Բաժանման վարդերի փուշը դարձար։

ԿՐԿՆԵՐԳ Տանջեցիր, ի՞նչ օգուտ, ով անգո՛ւթ յար,
Չէ՞ որ սերը իմ սիտն է զարկել քարեքար։
Ժպտացիր դու սիրով ամենքին, յա՛ր,
Ինձ թողիր անմեկին ճամփեքին, յա՛ր։

2. Ա՞խ, լիներ գեթ մի հնար,
Մեր սիրուց հուշ չմնար,
Նոր հույսով, նոր լույսով օրը բացվեր,
Իմ սիրո ալ վարդի նորը բացվեր։
Ինձ միայն վարդերի փուշը մնաց,
Բաժանման դարդերի հուշը մնաց։

ԿՐԿՆԵՐԳ

Ինձ միայն վարդերի փուշը մնաց,
Կարոտած դարդերիս հուշը մնաց։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նախաբան 3
Կարոտ 6
Երջանկություն.....10
Դարձար դու.....14
Քո աչերը.....18

ԱԻԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՐԳԵՐ ԵՎ ՌՈՄԱՆՄՆԵՐ

Զայնի և դաշնամուրի համար

Կազմող՝ Արման Ավետիսյան
Սրբագրող՝ Նարինե Սահակյան

Չափսը՝ 60x84 1/8:
Տպագրությունը՝ օֆսեթ: Ծավալը՝ 3 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100 օրինակ:
Տպագրված է «Որդան Կարմիր» տպագրատանը
ք. Վանաձոր, Գարեգին Նժդեհի 9

ISMN 979-0-69380-416-0

9 790693 804160 >